

անոնք, կը յարէ, մի անգամ միայն ճաշակեն մեր անօթէն, լուացուելով կրնայ գործածուիլ. իսկ շատ անգամ ճաշակածը մերժելի է (ԺԳ): Այս խտրութիւնը ընդունուած էին ազգէն եւ դեռ կը մնային ժե դարուն, ուր քահանայք վրէժինդիր կը լինէին, կ'ըսէ Ապարանեցին, եթէ մէկը «Պարսից ամանով ջուր է ըմբեալ, եւ միով ամանով ընդ նոսա կերեալ» (ԽԵ, ԼԸ):



#### Գ. ՍՐԲՈՒԹԻՒՆ ՊԳՆԵԼՈՅ

Կերակուրն ու անօթը, որ կը պղծուէին անսուրբ իրերէ, բնական էր՝ որ պղծէին իրենցմէ ձաշակողն ալ: Գարձեալ շատ աւելի ենթակայ էին այս անսրբութեան՝ Ս. Սեղանոյն պաշտօնեայք քան լոկ հաւատացեալք: Այս պղծութենէն մաքրուելու երկու եղանակ կար, ապաշխարութիւն եւ աղօթք:

1. — Ապաշխարութիւն: — Ս. Ներսեսի կանոնք կը սահմանեն՝ որ մկնանկ գինի խմողը՝ — յայտնի չէ՝ ակամայ թէ կամաւ՝ — քառասուն օր պահք պահէ (Ներս.